ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 դեկտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

175
(3025)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԵՐԹԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂԸ՝ ՔՊ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նոր պատգամավորը՝Ջուլիետա Ազարյանը, ով կփոխարինի Դավիթ Առուշանյանին, նշանակվել է Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալ առանց բարձրագույն կրթության:

30-ամյա Ջուլիետա Ազարյանը, քաղաքական կարիերա չունենալով, միանգամից դարձել է Ավան վարչական շրջանի ղեկավար: Նա 2016 թվականին ավարտել է ՀՀ Երեւանի Էստրադայի եւ ջազային արվեստի պետական քոլեջը:

Քոլեջն ավարտելուց հետո միայն 8 տարի անց, երբ 2 տարի է, ինչ զբաղեցնում է վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պաշտոնը, այս տարի՝2024 թվականին, ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի մշակութաբանության ֆակուլտետ եւ այժմ սովորում է այնտեղ:

Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Ջուլիետա Ազարյանը 2013-2014 թվականին կամավոր է եղել World Vision Armenia կազմակերպությունում: 2015 թվականին եղել է «Բի Դի Էս» ՍՊԸ-ի գլխավոր Visual Merchandiser-ը:

2018 թվականին եղել է «Բեմել» ընկերության միջոցառումների կազմակերպիչը: 2020 թվականի հոկտեմբերին կազմակերպել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի «Ներդրողների խթանման եւ արտաքին կապերի» վարչության արտահանման միջոցառումները: 2021-2022 թվականներին աշխատել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի «Ներդրողների աջակցման եւ հետներդրումային սպասարկման» վարչությունում՝ որպես ծրագրերի համակարգող:

2021 թվականին հունիսի 20-ին Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից առաջադրվել է պատգամավորի թեկնածու:

04.08.2022-04.08.2024 թվականին եղել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Ավանի տարածքային կազմակերպության խորհրդի քարտուղարը:

Ազարյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Ավանի տարածքային կազմակերպության խորհրդի անդամ է:

Ջուլիետա Ազարյանը 2021 թվականին Կոտայքի մարզի Առինջ գյուղում ձեռք է բերել բնակարան բազմաբնակարան շենքում:

2023 թվականին, երբ զբաղեցրել է Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պաշտոնը, 1 մլն դրամով հողամաս է ձեռք բերել Փարաքար համայնքում:

Ազարյանը տրանսպորտային միջոց չի հայտարարագրել:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 282 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 300 հազար դրամ եւ 5 հազար ԱՄՆ դոլար:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 7 մլն 991 հազար դրամ, որից 6 մլն 516 հազարը աշխատանքի վարձատրություն է «Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկից, իսկ 405 հազարը այլ եկամուտ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 13 մլն 853 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

ՀՀ քննչական կոմիտեում քննիչները որոշել են ինքնակամ դիմում չգրել ու սպասում են Կոմիտեի նորանշանակ նախագահ, նախկին գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանի՝ «դիմում գրի» արտահայտությանը: Բանն այն է, որ Կոմիտեի աշխատակիցների զգալի մասը համակարգը լքել է Քյարամյանի հեռանալուց հետո, երբ Պողոսյանը նշանակվել է ՔԿ նախագահ: Ոմանց Արթուր Պողոսյանն անձամբ ասել է՝ «գրի գնա». ուստի լուրջ պաշտոն զբաղեցնող շատ պաշտոնյաներ, ի հակառակ նոր նախագահի այս վարքագծի, որոշել են անձամբ դիմում չգրել, չգնալ, եւ սպասում են Արթուր Պողոսյանի կամ sms-ին կամ հրահանգին: Սակայն սա վերջը չէ: Կոմիտեի աշխատակիցների համար ակնհայտ է մեկ բան. Քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանի գործողությունները կամ քայլերը կոմիտեում կառավարվում են Գլխավոր դատախազությունից: Բանն այն է, որ Պողոսյանը Կոմիտեից ազատում է այն պաշտոնյաներին, որոնք կապ են ունեցել նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հետ, կամ խնդիր են ունեցել գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հետ ու Դատախազությունը լքելուց հետո՝աշխատանքի են անցել Քննչական կոմիտեում: Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը անձամբ է իր «հեռակա» նախկին տեղակալի միջոցով կառավարում կոմիտեն, թե ոչ՝ցույց կտան հետագա պաշտոնանկությունները. իսկ «Ժողովուրդ» օրաթերթը կհետեւի հետագա զարգացումներին:



ՔՊ երիտթեւը որոշել է մաքրել խմբակցությունը տարեց պատգամավորներից ու հերթով ազատվել նրանցից: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հովիկ Աղազարյանից ու Հակոբ Ասլանյանից հետո հաջորդը Գագիկ Մելքոնյանն է. նրան եւս ՔՊ երիտասարդները մտադիր են հեռացնել իրենց շարքերից: Գագիկ Մելքոնյանի հեռացման համար ՔՊ-ականները լուրջ պատճառներ ունեն: Նախ՝ վերջինս խմբակցության նիստին «կես բերան» փորձել է պաշտպանել Հովիկ Աղազարյանին ու ասել, թե պետք չէր նրա անձնական նամակագրությունը հանրայնացնել ու կարդալ: Բացի դրանից՝ ՔՊ վերնախավին նյարդայնացրել է նաեւ այն, որ Գագիկ Մելքոնյանը հաճախ ՔՊ «գծերից» դուրս է գալիս ու ինքնագլուխ կոպիտ ու անթույլատրելի հայտարարություններ անում ռուս պաշտոնյաների, հատկապես Մարիա Զախարովայի վերաբերյալ: ՔՊ-ում կարծում են, որ հատկապես ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Մարիա Զախարովայի հետ կապված Գագիկ Մելքոնյանը կարմիր գծերն անցնում է: Անգամ ՔՊ փակ նիստի ժամանակ Հայկ Կոնջորյանն ու Արթուր Հովհաննիսյանը «հրահանգել» են Գագիկ Մելքոնյանին՝ եթե չի կարողանում մտածված խոսի, ուրեմն թող լուռ մնա, հարցազրույցներ չտա: Գագիկ Մելքոնյանն էլ, ինչպես տեսնում ենք, չի կարողանում զսպել իրեն ու երբեմն լռելուց հետո շարունակում է չմտածված հայտարարություններ անել, ինչն ավելի է բարկացնում ՔՊ երիտթեւին: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Գագիկ Մելքոնյանը հերքել էր, թե իրեն մտադիր են հեռացնել խմբակցությունից, բայց պնդել՝ եթե Նիկոլ Փաշինյանն ասի, ինքը մանդատը կդնի, կգնա:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Հակակոռուպցիոն կոմիտեում ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյանի քրեական գործով (կաշառքով մանր եղջերավոր անասուններ արտահանելու քրգործը) նոր ապացույցներ են ի հայտ եկել: Ըստ մեզ հասած հավաստի տեղեկությունների՝ նախաքննական մարմինը առաջիկայում առարկայական գործողությունների կգնա: Նշենք, որ Դատախազության՝ ArmLur.am-ի աղբյուրները հայտնել էին, որ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին մի քանի անգամ կոնկրետ այս գործով կանչել են Հակակոռուպցիոն կոմիտե, նա նախաքննական մարմնում առերեսվել է կաշառքի գործով: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր. «Իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին կաշառք տալու գործով ՀՀ քաղաքացի Աշոտը մեղադրյալի աթոռին է հայտնվել, իսկ պատգամավորը անպատիժ է մինչ օրս: ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի դեմ Հակակոռուպցիոն կոմիտեում տրված ցուցմունքի համաձայն՝նա 300 հազար ԱՄՆ դոլար կաշառք է ուզել, որ Հայաստանից, սահմանված ընթացակարգերի խախտմամբ, առանց խոչընդոտների, մանր եղջերավոր անասուններ արտահանեն Արաբական Միացյալ Էմիրություններ: ՔՊ պատգամավորի դեմ ցուցմունք տված անձին՝Աշոտին, Հակակոռուպցիոն կոմիտեն մեղադրանք է առաջադրել ՔՊ պատգամավոր Հովիկ Աղազարյանին կաշառք փոխանցելու շուրջ պայմանավորվածություն ձեռք բերելու համար. նրա նկատմամբ ընտրված է խափանման միջոց՝երկրից չբացակայելու արգելքը, սակայն պատգամավոր Աղազարյանին մեղադրանք առաջադրված չէ»:

ԶՐՈՒՅՑ

«ԴԱՏԱԽԱԶԸ ՊԵՏՔ Է ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵՐ», ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի գործը հակակոռուպցիոն դատարանի վերջնական փուլում է. առաջիկայում ճառով հանդես է գալու մեղադրող դատախազը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ռուբեն Վարդազարյանը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ հարցաքննության հրավիրելու ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանին, նախկին Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին եւ այլ անձանց, սակայն դատարանը մերժել է՝ պատճառաբանելով, թե նրանք մեղադրանքի հետ կապ չունեն:

Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդազարյանը մեղադրվում է արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար: Վարդազարյանը, ըստ մեղադրանքի, 2019 թվականի հուլիսի 19-ից զբաղեցնելով ԲԴԽ նախագահի պաշտոնը, հանդիսանալով դատական իշխանության մարմնի ղեկավար աշխատող, միջամտել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անդրանիկ Սիմոնյանի կողմից արդարադատության իրականացմանը:

Ըստ Սիմոնյանի հաղորդման՝ Վարդազարյանը «ալավերդցի Վահագն» անունով հայտնի Վահագն Աբգարյանի գործով է իրեն դիմել: Աբգարյանը մեղադրվում է Ալավերդու բնակիչ Կամո Փիրուզյանի սպանությունը կազմակերպելու, ինչպես նաեւ սպանության գործով իր օգտին գործողություններ կատարելու եւ կաշառք տալու համար. գործով առկա է նաեւ ձայնագրություն:

Ըստ մեղադրանքի՝ Ռուբեն Վարդազարյանը Signal հավելվածի միջոցով կապ է հաստատել Անդրանիկ Սիմոնյանի հետ եւ վերջինիցս պահանջել (խնդրանքի եղանակով) փոխել Աբգարյանի խափանման միջոցը՝ կալանավորումը: Վարդազարյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում:

Հիշեցնենք, որ խոսքը նույն Անդրանիկ Սիմոնյանի մասին է, որը այս գործից հետո նոր պաշտոն ստացավ՝ դառնալով ՀՀ ԿԱ ԱԱԾ տնօրենի տեղակալ:

Այսօր Հակակոռուպցիոն դատարանում ArmLur.am-ը զրուցել է ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի հետ:

Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցը.

-Պարոն Վարդազարյան, մենք լսեցինք պաշտպանի ճառը, եւ քանի որ գործը գտնվում է ավարտական փուլում, հետաքրքիր է՝ ինչ ակնկալիքներ ունեք դատական վեճերի հետ կապված:

-Նախ՝ հանրային ձեւով ցանկանում եմ շնորհակալություն հայտնել պաշտպան Երեմ Սարգսյանի հիմնավոր եւ տպավորիչ ճառի համար: Նման խորությամբ այդ քրեական գործի էությունը չեն պատկերացրել ո՛չ քննիչը, ո՛չ դատախազը, ո՛չ էլ դատավորը. ավելի քան վստահ եմ: Ինչ վերաբերում է ակնկալիքներիս, ապա, միգուցե, Ձեզ զավեշտալի թվա. ակնկալում էի, որ պաշտպանի ճառից հետո դատախազը պետք է վեր կենար, ասեր՝ ներողություն, հրաժարվում եմ մեղադրանքից, եւ այսքանով ավարտվեր այս գործի վարույթը: Բայց, ինչպես տեսաք, դատախազը ցանկացավ հանդես գալ մեկնաբանությամբ: Տեսնենք՝ հաջորդ նիստին ինչ արձագանք կտա դատախազը: Սպասենք:

Զրուցեց ՀՈՎՍԵՓ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՓՈԽԹԱՂԱՊԵՏԸ՝ ՔՊ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՔՊ խմբակցությունը նոր պատգամավոր կունենա: Դեռ դեկտեմբերի 11-ին պատգամավոր Դավիթ Առուշանյանը հայտարարեց մանդատը վայր դնելու մասին: Նա նշանակվելու է Շիրակի մարզպետ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ խորհրդարանում Առուշանյանին փոխարինելու կգա Ջուլիետա Ազարյանը, նա ՔՊ ցուցակի հաջորդ համարն է:

Վերջինս Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պաշտոնն է զբաղեցնում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Ջուլիետա Ազարյանը նշեց, որ հակված է մանդատը վերցնել:

«Իհարկե դեռ վաղ է խոսել այդ մասին, բայց միեւնույն ժամանակ թույլ տվեք ընդգծեմ, որ որպես «ՔՊ» կուսակցության եւ խորհրդի անդամ չվերցնելու որեւէ պատճառ չեմ տեսնում այս պահին: Հակված եմ վերցնել մանդատը»,- ասաց Ազարյանը:

ՍԱՐԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԸ ՔՊ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ՔՊ-ից հաստատում են՝ Գյումրու համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատարի նախնական ընտրություններում հաղթած անկուսակցական Սարիկ Մինասյանը Քաղաքացիական պայմանագիր կուսակցությանն անդամակցելու հայտ է ներկայացրել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության աշխատակազմի ղեկավար Արուսյակ Մանավազյանը հայտնեց, որ վարչության հաջորդ նիստում վարչության անդամները կքննարկեն նրա անդամակցության հայտը:

Նշենք, որ Սարիկ Անդրեասյանն այսօր նշանակվեց Գյումրու համայնքապետի պաշտոնակատար, իսկ արդեն հաջորդ տարի կայանալիք արտահերթ ընտրություններում նա գլխավորելու է ՔՊ-ի ցուցակը:

Նյութերը՝ ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ

ԽՈՒՐԻԿ-ԱՔՅԱՔԱ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԸ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑ

Հայաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչները հայ թուրքական սահմանին հանդիպել են ու քննարկել Ախուրիկ-Աքյաքա երկաթուղային անցակետը վերագործարկելու հարցը:

Այս մասին Հանրային հեռուստաընկերության եթերում ասաց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը:

«Հանդիպումը տեղի է ունեցել վերջին հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության կոնտեքստում: Մենք պայմանավորվել էինք, որ կողմերը տեխնիկական գնահատում կանեն կարիքների, որոնք անհրաժեշտ են Ախուրիկ-Աքյաքա երկաթուղային անցակետը վերագործարկելու համար», - նշել է Ռուբինյանը:

ԿԱ ԵՌԱԿՈՂՄ ՓՈԽԸՄԲՌՆՈՒՄ

Համընդհանուր փոխըմբռնում է ձեռք բերվել, թե ինչպես կարելի է վերականգնել Ադրբեջանի եւ Նախիջեւանի երկաթուղային հաղորդակցությունը: Այս մասին «Ռոսիա 24»-ին տված հարցազրույցում ասել է ՌԴ փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը:

«Պետք է ասեմ, որ հայ եւ ադրբեջանցի մեր գործընկերների հետ կարգավորման բազմաթիվ ուղղություններով արդեն լուրջ արդյունքների ենք հասել: Կցանկանայի խոսել տարածաշրջանային տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման մասին, առաջին հերթին՝ երկաթուղային: Եռակողմ աշխատանքային խմբի շրջանակներում, որը ղեկավարում են փոխվարչապետները, ընդհանուր փոխըմբռնում է ձեռք բերվել, թե ինչպես կարելի է վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը: Խոսքը Հայաստանի Սյունիքի մարզով Ադրբեջան - Նախիջեւան ճանապարհի մասին է»,- նշել է Գալուզինը:

ԿԱՄՈ ՑՈՒՑՈՒԼՅԱՆԸ՝ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դեկտեմբերի 13-ի որոշմամբ՝ Կամո Ցուցուլյանը վերանշանակվել է ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ:

ԳԱԼՈՒԶԻՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ռուսաստանն անում է եւ անելու է ամեն ինչ, որպեսզի Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ պայմանավորվածությունները կյանքի կոչվեն: Այս մասին հայտարարել է ՌԴ ԱԳՆ ղեկավարի տեղակալ Միխայիլ Գալուզինը:

«Մոսկվան մնում է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության հասնելու, խաղաղության պայմանագրի կնքման, Հարավային Կովկասում բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերի ապաշրջափակման կողմնակիցը. Բաքվի եւ Երեւանի միջեւ կապերի նոր հիմքում»,- նշել է նա:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԵԿՆԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն:

ՀՀ կառավարությունից հայտնում են, որ այսօր Մոսկվայում վարչապետ Փաշինյանի նախագահությամբ տեղի է ունենալու Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՆԱՐԱՎՈՐ Է ԳԵՐԻՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Ռուսաստանը համաձայնել է Սուրբ Ծննդյան կապակցությամբ գերիների փոխանակում կատարել Ուկրաինայի հետ, իսկ Ուկրաինան մերժել է, սակայն դրա հույսը դեռ չի մարել: Ինչպես տեղեկանում ենք ՏԱՍՍ-ից, այս մասին հայտարարել է Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանը Kossuth ռադիոկայանի առավոտյան հաղորդման եթերում:

Հունգարիայի վարչապետը հիշեցրել է, որ դեկտեմբերի 11-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հեռախոսով քննարկել է «սուրբծննդյան հրադադարի» եւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ գերիների լայնածավալ փոխանակման հնարավորությունը: Այնուհետեւ Հունգարիան դիվանագիտական ուղիներով իր նախաձեռնությունը ներկայացրել է Ուկրաինային, սակայն նախագահ Վոլոդիմիր Զելենսկին մերժել է այդ առաջարկը: Նույն օրը Օրբանը հրապարակավ հիասթափություն էր հայտնել այս առնչությամբ:

«Մի կողմը համաձայնել է, մյուսն, ըստ երեւույթին, հրաժարվել է, բայց հավանականությունը դեռ մնում է», - ասել է Օրբանը ռադիոկայանի եթերում: Նա նշել է, որ հակամարտող կողմերի միջեւ գերիների լայնամասշտաբ փոխանակումը «կարող է ուրախացնել հարյուրավոր կամ հազարավոր մարդկանց»: Ավելի վաղ Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը նույնպես հայտնել էր, որ Մոսկվան անմիջապես արձագանքել է Օրբանի նախաձեռնությանը, սակայն Կիեւը մերժել է այն:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՆՔ ԵԿԵԼ. ԲԼԻՆՔԵՆ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենն ասել է, որ Վաշինգտոնն ու Անկարան ընդհանուր առմամբ համաձայնության են եկել Սիրիայի ապագայի տեսլականի շուրջ:

«Մենք կենտրոնացած ենք մեր եւ սիրիացի ժողովրդի առջեւ եղած հնարավորության վրա: Մենք կենտրոնացած ենք սիրիացի ժողովրդին Բաշար ալ Ասադի կապանքներից ազատելու վրա... Նախագահ Թայիփ Էրդողանի, արտգործնախարար Ֆիդանի հետ մեր քննարկումների ընթացքում մենք ընդհանուր առմամբ համաձայնության ենք եկել Սիրիայի ապագայի տեսլականի ուղղությամբ մեր քայլերի շուրջ»,- ասել է պետքարտուղարը:

ՎԻԶԱՆԵՐԻ ԱՐԳԵԼՔ

ԱՄՆ Պետդեպարտամենտը հայտարարել է Վրաստանի առանձին քաղաքացիներին ամերիկյան վիզաների տրամադրման արգելքի մասին: «Պետդեպարտամենտն այսօր իր քաղաքականության շրջանակներում հայտարարում է վիզային սահմանափակումների լրացուցիչ միջոցների մասին, որն արգելում է վիզաների տրամադրումը Վրաստանում ժողովրդավարության խաթարման համար պատասխանատուներին կամ մեղսակիցներին»,- ասված է Պետդեպարտամենտի հայտարարության մեջ: Այս սահմանափակումները կվերաբերեն 20 մարդու, այդ թվում՝ կառավարության նախարարների, իրավապահ մարմինների եւ անվտանգության պաշտոնյաների, ինչպես նաեւ մասնավոր անձանց: Պետդեպարտամենտը նշել է, որ Միացյալ Նահանգները դատապարտում է բռնությունը ցուցարարների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, իրավապաշտպանների եւ ընդդիմադիր գործիչների նկատմամբ:

ԻՆՉՈՒ Է ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆՎԵԼ

ԽՑԱՆՈՒՄՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐՈՒՄ

Վերջին շրջանում համացանցում կարելի է հանդիպել Շենգենյան գոտու պետությունների միջեւ ներքին սահմաններում առաջացած խցանումների վերաբերյալ բազմաթիվ տեսանյութերի եւ նկարների: Հերթերի վերաբերյալ ահազանգեր են հնչեցնում նաեւ զբոսաշրջիկները, որոնք ստիպված են լինում հասել ներքին սահմանները՝ օդանավակայան մեկնելիս եւ հաճախ ուշանում են իրենց թռիչքից՝ սահմանային անցակետերում առկա ծանրաբեռնվածության պատճառով:

Ի՞նչ է կատարվում Եվրոպայի սրտում

Հայտնի է, որ Շենգենյան գոտու պետությունների միջեւ ներքին սահմանները սովորաբար ազատ են եւ առանց փաստաթղթերի կնքման մարդիք կարողանում են տեղաշարժվել: Սակայն 2024 թվականի երկրորդ կեսից ներքին սահմանային անցակետերում ուժեղ հսկողություն է սկսվել:

Ավստրիան, Դանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Նորվեգիան, Սլովենիան եւ Շվեդիան ընդլայնել են ներքին ստուգումները իրենց սահմաններում մինչեւ 2025 թվականի մարտ-հունիս ամիսները: Դեկտեմբերի 9-ից խստացված ստուգումներ են սկսվել նաեւ Նիդեռլանդների սահմանային անցակետերում, որը կտեւի մինչեւ 2025 թվականի հունիս ամիսը:

Սահմանները հատելիս սահմանապահները կարող են պահանջել անձը հաստատող փաստաթուղթ, իսկ նրանք ովքեր ճանապարհորդում են Շենգենյան անցագրով, ապա պետք է հիշեն, որ վեց ամսվա ընթացքում 90 օրից ավել չեն կարող գտնվել Շենգենյան գոտում, ինչը հատկապես սահմանապահների ուշադրության կենտրոնում է:

Ինչո՞ւ

Ներքին սահմանների հսկողությունը, սկզբունքորեն, չի թույլատրվում Շենգենյան գոտում, քանի որ հանգեցնում է սահմաններում երթեւեկության դանդաղեցման եւ Եվրոպական միասնական շուկայում շարժունակության խոչընդոտմանը: Նման ստուգումները, այնուամենայնիվ, հնարավոր են որպես ազգային անվտանգության ժամանակավոր միջոցներ: Այս ստուգումները, այնուամենայնիվ, մի քանի տուժած երկրներում գործում են 2015 թվականի վերջից՝ տարբեր ձեւերով:

2024 թվականի կեսերին ուժի մեջ է մտել Շենգենյան սահմանային օրենսգիրքի փոփոխված տարբերակը, որը, ի թիվս այլ փոփոխությունների.

✔ է տալիս կիրառել ԵՄ ողջ տարածքում շարժման սահմանափակումներ հանրային առողջության լայնածավալ արտակարգ իրավիճակների դեպքում.

✔ Հստակեցնում է ԵՄ անդամ պետությունների ներքին սահմանների հսկողության կիրառման կանոններն ու ընթացակարգերը.

✔ Որպես ներգաղթի դեմ պայքարի մաս՝ ԵՄ անդամ պետություններին ավելի մեծ լիազորություններ է տալիս սահմանային անցակետերի քանակը (եւ աշխատանքային ժամերը) նվազեցնելու եւ սահմանային հսկողության միջոցառումները մեծացնելու համար:

Հայտնի է նաեւ, որ երեկ Ռումինիան եւ Բուլղարիան միացել են Եվրոպայի Շենգենյան ազատ գոտուն:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՀ–Ն ԵՎՐՈՊԱԼՈՒՄ ԿԱՊԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ ԿԱՊԻ ՍՊԱ ԿՈՒՆԵՆԱ

Կառավարությունն ընդունել է «ՀՀ ներքին գործերի նախարարության եւ Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջեւ փոխգործակցության մասին» համաձայնագրի հիման վրա Նիդերլանդների Թագավորությունում ՀՀ դեսպանությանը կից ՀՀ կապի ներկայացուցչի (կապի սպայի) մասին» որոշում:

Ըստ հիմնավորման՝ համաձայնագիրը հնարավորություն կընձեռնի՝ Եվրոպոլում ունենալու կապի ներկայացուցիչ (կապի սպա), ում միջոցով անմիջական կապ կհաստատվի ինչպես Եվրոպոլի, այնպես էլ՝ Եվրոպական միության անդամ երկրների՝ Եվրոպոլ գործուղված կապի սպաների հետ:

Արդյունքում կապահովվի տեղեկատվության արագ եւ անվտանգ փոխանակումը, ինչպես նաեւ՝ Եվրոպոլի եւ վերջինիս հետ համագործակցող երկրների իրավապահ մարմինների հետ համագործակցության խորացումը:

3.Աղազարյանին դուրս ենք շպրտել ՔՊ-ից. առաջարկում եւ պնդում ենք, որ նա եւ Ասլանյանը վայր դնեն մանդատները. Ռուբինյան

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանն անդրադարձել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից հեռացված պատգամավորներ Հովիկ Աղազարյանի եւ Հակոբ Ասլանյանի գործողություններին:

«Օրինակ վարչապետը բանակցություններից եկել, խմբակցությանը մանրամասներ է պատմել եւ ուղիղ ասել, որ դրանք հրապարակման ենթակա չեն, իսկ Աղազարյանը դրա հետ կապված նույնպես արտահոսք է կազմակերպել: Ընդ որում, երբ դա հայտնի է դարձել, նա չի հերքել: Ինձ եւ «Քաղաքացիական պայմանագրի» համար դա աններելի, մեծագույն մեղք է, եւ դրա համար մենք պարոն Աղազարյանին դուրս ենք շպրտել ՔՊ խմբակցությունից եւ կուսակցությունից»,- ասաց Ռուբինյանը:

Ըստ Ռուբինյանի, եթե Ասլանյանը հայտարարում է, որ Աղազարյանի գործողություններում խնդիր չի տեսնում, կարելի է եզրակացնել, որ նա խնդիր չի տեսնում ինչ-որ թերթի ինֆորմատոր լինելու մեջ, կամ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունը ինչ-որ թերթի կամ թերթոնի տալու մեջ:

«Պարոն Ասլանյանը հետո ասաց, որ զղջում է, բայց դա անլուրջ է եւ կարեւոր է, որ մարդ պատասխանատու լինի իր արարքի համար: Դրա համար մենք պարոն Ասլանյանին հեռացրել ենք խմբակցությունից եւ առաջարկում ու պնդում ենք, որ մանդատը դնի, ինչը անում ենք նաեւ Աղազարյանի դեպքում»,- ասաց Ռուբինյանը:

ԱՄԱՐԱՍԸ ԱՂՎԱՆԱԿԱՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր վանական համալիրներից մեկն Ամարասն է: Ըստ 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի՝ Ամարասի Սուրբ Գրիգորիս եկեղեցին՝ 4-րդ դարի սկզբին կառուցել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ ավարտին է հասցրել նրա թոռը՝Գրիգորիսը, ում, ըստ հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացու, հուղարկավորել են եկեղեցու արեւելյան կողմում: 5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցն այստեղ հիմնել է Արցախի առաջին դպրոցը: Ամարասը եղել է Արցախ-Ուտիք երկրամասի հոգեւոր եւ եպիսկոպոսանիստ կենտրոններից մեկը: Դարերի ընթացքում վանքը մի քանի անգամ ավերվել է օտար նվաճողների կողմից: 15-16-րդ դարերում այստեղ գրվել եւ ընդօրինակվել են հայերեն բազմաթիվ ձեռագիր մատյաններ: 2023 թվականի սեպտեմբերին Ամարասն օկուպացվել է ադրբեջանական զինուժի կողմից:

Անհնար է պատկերացնել, թե ինչպես կարող է Արցախի եւ Ուտիքի հայության հոգեւոր-մշակութային կենտրոններից Ամարասը լինել «աղվանական» մշակութային կառույց, երբ անգամ դուրս էր Բուն Աղվանքի տարածքից:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆԳ ՆԱԽԱՐԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԻԵԴ ԵԽԽՎ ՋԵԿՈՒՅՈՂԻՆ

ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը դեկտեմբերի 11-ին ընդունել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Կիպրոսի պատվիրակության անդամ, ՄԻԵԴ վճիռների կատարման հարցերով զեկուցող Կոնստանտինոս Էֆսթաթիոնի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը մասնակցում էր ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը:

ՆԳ նախարարն ընդգծել է, որ ՄԻԵԴ վճիռների արդյունավետ կատարումը միջոց է Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության առավել բարձր երաշխիք ապահովելու գործում:

Անդրադառնալով մի շարք գործերով ՄԻԵԴ վճիռներով արձանագրված խախտումներին՝ Արփինե Սարգսյանը մատնանշել է ՆԳ նախարարության մանդատի շրջանակում ինստիտուցիոնալ մեխանիզմներ ձեւավորելու ուղղությամբ գործիքակազմերն ու անելիքները:

Խոսելով համաչափ ուժի կիրառման ստանդարտի ներդրման մասին՝ ՆԳ նախարարն առանձնացրել է ԱԺ կողմից Ոստիկանության գվարդիայի ձեւավորման նախագծերի փաթեթի ընդունումը, ինչը թույլ կտա նոր մոտեցմամբ ապահովել հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացումը: Այդ համատեքստում ՆԳ նախարարը կարեւորել է անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումները: Արձանագրվել է, որ նախագծի մասով ստացվել է Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագիտական դրական գնահատականը:

Բարձր գնահատելով ՄԻԵԴ վճիռների կատարման ուղղությամբ ՆԳ նախարարության քայլերը՝ Կոնստանտինոս Էֆսթաթիոնը կարեւորել է մի շարք ուղղություններով օրենսդրական դաշտի լավարկման գործընթացը՝ դրական գնահատելով մինչ այժմ կատարված աշխատանքը:

Կողմերը քննարկել են վատ վերաբերմունքի առերեւույթ դրսեւորումների պատշաճ արձանագրման, ձերբակալվածների պահման վայրերի պայմանների բարելավման, ոստիկանության բաժինները տեսանկարահանող սարքավորումներով ապահովելու, ինչպես նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Քննարկման առարկա են դարձել նաեւ ընդդեմ Հայաստանի Հանրապետության խմբային գործերով ձեռնարկված միջոցառումների դրական արդյունքները:

Ք.Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ

Դեկտեմբերի 10-ին կրակոցներ էին հնչել Երեւանում: Կրակոցների ընթացքում նշված վայրով անցնող Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ավագ դատախազը, վտանգելով կյանքը, իր ավտոմեքենան կանգնեցրել է ռուսական համարանիշներով ավտոմեքենայի առաջ, որի միջից էլ հենց կրակոցներ են արձակվել, որպեսզի վարորդը չդիմի փախուստի: Սակայն վարորդը, ով երիտասարդ տղա էր, ավտոմեքենան քշել է ոչ միայն դատախազի, այլեւ լրագրող Գագիկ Շամշյանի ուղղությամբ եւ երբ հորդորվել էր, որ դեպքի վայրից չհեռանա, նա դիմել է փախուստի:

Փախուստի են դիմել եւս 2-3 ավտոմեքենաներ: Նշված ավտոմեքենաներից երկուսի համարանիշներն արդեն իրավապահներն ունեն:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե ինչից են սկսվել կրակոցները: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Սարալանջում հարվածել են ռուսական համարանիշներով ավտոմեքենային, որից հետո սկսվել է վիճաբանություն: Մի խումբ երիտասարդներ դիմակավորված ծեծի են ենթարկել վարորդին: Վերջինս փորձել է փախչել իր վրա հարձակված մարդկանցից, ու այդ պահին նշված վայրով անցնող Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ավագ դատախազը ավտոմեքենան կանգնեցրել է ռուսական համարանիշներով ավտոմեքենայի առաջ, որ երիտասարդը չփախչի:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների՝ երիտասարդը փախչելուց հետո գնացել է հիվանդանոց, քանի որ իրեն դաժանաբար ծեծի են ենթարկել:

Այս պատմության մեջ ուշագրավն այն է, որ երիտասարդին իրավապահները տուժող են ճանաչել, սակայն ձերբակալել են նրա հորը, ով որդու դեմ հրաժարվել է ցուցմունք տալ: Ավելին՝ փորձել են ձերբակալել փախուստի դիմած վարորդի 19-ամյա նշանածին, սակայն պաշտպանների միջամտության արդյունքում այն չի իրականացվել:

ՔԱՂԱՔԱՑԻ Է ՓՈՐՁԵԼ ԻՆՔՆԱՀՐԿԻԶՎԵԼ

Երեկ՝ դեկտեմբերի 13-ին սննդի անվտանգության տեսչական մարմնի հետ ՆԳՆ ոստիկանության ծառայողները հերթական համատեղ ստուգայցն են կատարել Երեւանի Խորենացի փողոցում գտնվող մսի վաճառքով զբաղվող խանութներ՝ ստուգվել է մսի սպանդանոցային մորթի վերաբերյալ փաստաթղթի առկայությունը:

«ՍԱՏՄ աշխատակիցների եւ հավաքված քաղաքացիների միջեւ առաջացած վիճաբանության ընթացքում քաղաքացիներից մեկը բենզին է լցրել իր վրա եւ փորձել ինքնահրկիզվել, որը կանխվել է ոստիկանների կողմից: Միջադեպի մասնակից եւս յոթ անձ խուլիգանության եւ դիտավորությամբ գույքը վնասելու անմիջական կասկածանքով ձերբակալվել, տեղափոխվել է ոստիկանություն»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց ՆԳՆ մամուլի խոսնակ Նարեկ Սարգսյանը: Նրանց վերաբերյալ կազմվում են համապատասխան փաստաթղթեր նախաքննական մարմին ներկայացնելու համար:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ–ԹՈՒՐՔԻԱ ՍԱՀՄԱՆԻ ՀԱՏՄԱՆ ՓՈՐՁ

ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունում տվյալներ են ստացվել դեկտեմբերի 11-ին՝ ժամը 03:20-ի սահմաններում, Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության պետական սահմանի Արարատի մարզի Ռանչպար բնակավայրի հատվածում ՀՀ պետական սահմանի ապօրինի հատման հավանական փորձի վերաբերյալ: Այս մասին հայտնում են ԱԱԾ-ից: Տվյալների ստուգման կապակցությամբ ներկայումս իրականացվում են անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Մեկ օրում հայտնաբերվել է 8 հետախուզվող, 1 անհետ կորած. ՆԳՆ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ դեկտեմբերի 11-12-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 131 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:

Մասնավորապես, բացահայտվել է տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 35, թմրանյութի հայտնաբերման՝ 20, խարդախության՝ 12, մարմնական վնասվածք պատճառելու՝ 8, հոգեկան ներգործության՝ 6, ֆիզիկական ներգործության՝ 5, խուլիգանության ու զենք-զինամթերքի առգրավման՝ 4-ական, ինքնիրավչության եւ փաստաթղթեր կեղծելու՝3-ական, անձնական ունեցվածքի գողության, վստահված գույքի հափշտակման, ջրային կենդանիներ ապօրինի որսալու, վարժական հավաքից խուսափելու եւ սառը զենքի հայտնաբերման՝ 2-ական, խոշտանգման, բնակարանային գողության, շորթման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, ահաբեկչության, պաշտոնեական լիազորությունների չարաշահման, պաշտոնեական կեղծիքի կամ անփութության, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, թմրանյութի իրացման, հարկեր, տուրքեր չվճարելու, դատական ակտը չկատարելու, աշխատանքային պաշտպանության կանոնները խախտելու, հետամտելու, անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու, մթնոլորտային օդն աղտոտելու, հրդեհատեխնիկական անվտանգության կանոնները խախտելու եւ գերեզմանն անարգանքի ենթարկելու՝1-ական դեպք:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է գույքը դիտավորյալ վնասելու եւ ֆիզիկական նեգործության 1-ական դեպք:

Հայտնաբերվել է 8 հետախուզվող, կամավոր ներկայացվել՝3-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձման 5 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 9 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՍԿԱԾՅԱԼՆԵՐՆ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեկտեմբերի 11-ին Վեդիի հիվանդանոց «զստափոսի շրջանի կտրած-ծակած թափանցող վերքով» Փոքր Վեդի գյուղից շտապ երիտասարդի են դանակահարված տեղափոխել: Վերջինս 24-ամյա Մ.Ա.-ն է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՈԳՎ Վեդիի բաժնի իրավապահները պարզել են, որ ժամը 14:30-ին Արտաշատ քաղաքի Իսակովի փողոցում անձնական հարցերի շուրջ վիճաբանություն է եղել 17 տարեկան անչափահաս Վ. Ղ.-ի, վերջինիս մորեղբոր որդի Մ. Ա.-ի եւ 15-ամյա անչափահաս Ա. Թ.-ի միջեւ:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ վեճի ժամանակ Ա. Թ.-ն իր մոտ եղած կտրող-ծակող առարկայով հարվածել է Մ. Ա.-ին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նախնական տեղեկությունների համաձայն աղջկա հետ կապված վեճ է եղել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 131 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՔԱՎՈՐ ՄԱՐԶՊԵՏՆ ՈՒ ԻՐ ԵՆԹԱԿԱՆԵՐԸ ՃՈԽ ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզպետարանից տեղեկացանք, որ 2024 թվականի դեկտեմբերի 4-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները պետական բյուջեից ստացել են 61,2 միլիոն դրամ պարգեւավճար: 2025 թվականի պետական բյուջեով Տավուշի մարզպետարանի պաշտոնյաների համար նախատեսված է 65,8 միլիոն դրամ պարգեւավճար: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը եւ մարզպետի աշխատակազմի պաշտոնյաները աշխատանքային ո՞ր նվաճումների, հաջողությունների համար են ճոխ պարգեւատրվում:

4 ՏԱՐՎԱ ԱՋԱՏԱՋՐԿՈՒՄ

Իջեւան քաղաքի բնակիչ, 1995թ.-ին ծնված, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, նախկինում չդատված Նարեկ Մելիքսեթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր ծանոթ, Իջեւան քաղաքի բնակչուհի ամուսնալուծված կնոջը խաբեությամբ, միմյանց փոխհարաբերությունների շուրջ պարզաբանումներ կատարելու պատրվակով, 2020 թվականի հունվարի 13-ին նրան առաջարկել է նստել իր կողմից շահագործվող «ՈւԱԶ» մակնիշի ավտոմեքենան, ինչը վերջինս կատարել է, որից անմիջապես հետո՝ ժամը 18:00-ի սահմաններում, խաբեության միջոցով, նշված ավտոմեքենայով Իջեւան քաղաքի Մայիսի 28 փողոցից ծանոթուհուն բացահայտ առեւանգելով՝ նրան փոխադրել է Իջեւան քաղաքի վարչական տարածքում գտնվող Խոլարքեր կոչվող հանդամասում իր կողմից որպես ամառանոց օգտագործվող տնակ: Ն. Մելիքսեթյանը տնակը նախապես տաքացրել եւ հյուրասիրության սեղան է պատրաստել: Դատարանը ապացուցված է համարել, որ Ն. Մելիքսեթյանը ժամը 20:00-ից 21:00-ի սահմաններում, ծանոթուհու կամքին հակառակ, նրա հագուստներից քաշքշելու, ձեռքերը եւ ոտքերը բռնելու, նրան հրելու միջոցով, բռնություն գործադրելով, փորձել է նրա կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալ, սակայն կինը դիմադրել է եւ զուգարան գնալու պատրվակով՝դուրս է եկել տնակից ու դիմել փախուստի: 29-ամյա տղամարդու կամքից անկախ հանգամանքներում բռնաբարությունն ավարտին չի հասցվել: 2024թ. նոյեմբերի 26-ին Իջեւան քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը Նարեկ Մելիքսեթյանին մեղավոր է ճանաչել նրան առաջադրված 2 հոդվածներով եւ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով նրա նկատմամբ վերջնական պատիժ է նշանակել 4 տարի ժամկետով ազատազրկումը: Տղամարդը մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի վճիռը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՕԿԱՄՊՈՆ ԼՂ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՏԵՍՆՈՒՄ

Միջազգային իրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոն համոզված է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը իր հայրենիք վերադառնալու բոլոր հնարավորություններն ունի:



Լուիս Մորենո Օկամպոն նման կարծիք հայտնեց «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» 5-րդ գլոբալ ֆորումի շրջանակներում «Արմենպրես»-ին տված հարցազրույցի ընթացքում:

«Լեռնային Ղարաբաղի հայերի վերադարձի հնարավորություն միանշանակ տեսնում եմ: Դա չի կարող անտեսվել: Պետք է շարունակել պայքարել: Դուք պետք է շարունակեք պայքարել: Պարտվում եք այն օրը, երբ դադարեցնում եք պայքարը: Հարկավոր է օգնել նրանց պայքարին՝ իրենց վերադարձի իրավունքի համար»,- ընդգծեց Օկամպոն՝հավելելով, որ Ադրբեջանը ճանաչում է, որ հայերը Լեռնային Ղարաբաղում գտնվելու իրավունք ունեն, հետեւաբար անհրաժեշտ է պայքարել ԼՂ-ի հայերի իրավունքների համար:

Անդրադառնալով հարցին, թե 2023 թվականին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը կարելի՞ է արդյոք որակել որպես ցեղասպանություն՝ Լուիս Մորենո Օկամպոն դրական պատասխան տվեց՝ նկատելով, որ ցեղասպանությունը պարզապես զանգվածային սպանությունները չեն, ինչպես, օրինակ, տեղի է ունեցել 1915 թվականին:

«Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած բոլոր իրադարձությունները պարունակում են ցեղասպանության բոլոր մեթոդներն ու ձեւերը՝ պայմաններ ստեղծելով մարդկանց խմբին ոչնչացնելու համար. դա Լաչինի միջանցքի շրջափակումն էր, Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչության փախուստի դիմելը, ինչպես նաեւ հայերին հասցված լուրջ հոգեկան վնասները, վախը եւ այլն: Այս բոլորը ցեղասպանության հատկանիշներ են: Եվ դա նույնպես ցեղասպանություն է»,-ասաց զրուցակիցը՝շեշտելով, որ բոլոր այս դեպքերում մարդիկ պետք է պաշտպանված լինեն, եւ նրանց իրավունքները պետք է վերականգնվեն:

Խոսելով Հայոց ցեղասպանության մասին՝Լուիս Մորենո Օկամպոն նկատեց, որ հայերն առաջին հերթին պայքարում են արդարության եւ հիշողության համար:

«Հայաստանը ցույց է տալիս, որ հիշողության համար պայքարելը կարեւոր է»,- ընդգծեց նա:

Անդրադառնալով հարցին, թե հնարավոր համարո՞ւմ է արդյոք, որ Թուրքիան երբեւէ ճանաչի Հայոց ցեղասպանությունը՝նա շեշտեց. «Մենք չգիտենք դա, բայց մենք պետք է ներգրավենք Թուրքիային եւ բացատրենք: Երիտասարդ սերունդը տարբեր է: Կարծում եմ, որ մենք կարող ենք ներգրավել նրանց եւ քննարկել այդ հարցը»:

Լուիս Մորենո Օկամպոյի բնորոշմամբ՝ հիմա ամենակարեւորն այն է, թե ինչ է տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղում, եւ, մասնավորապես այն, ինչ տեղի է ունենում Բաքվի բանտում գտնվող 23 հայերի հետ:

«Նրանք պատանդներ են, իսկ նրանց պատանդ պահելու ուղերձն այն է, որ, եթե վերադառնաք Լեռնային Ղարաբաղ, ապա հարձակման կենթարկվեք: Մենք պետք է ինչ-որ բան անենք նրանց համար»,-ընդգծեց Լուիս Մորենո Օկամպոն:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

1 ՏՈՆՆԱ ՄԻՍ Է ԱՌԳՐԱՎՎԵԼ ԵՎ ԵՆԹԱԿԱ Է ՈՉՆՉԱՑՄԱՆ

«Գում»-ի շուկայից մոտ մեկ տոնա միս է առգրավվել, այն կոչնչացվի: Լրատվամիջոցների հետ զրույցում ասել է ՍԱՏՄ մամուլի խոսնակ Անուշ Հարությունյանը:

Հարությունյանը նշեց, որ նախորդ տարվա դեկտեմբերին օրենքով հաստատվել է, որ ՍԱՏՄ-ն ոչ սպանդանոցային ծագման միսը կարող է առգրավել եւ ոչնչացնել, իսկ այս տարվա աշնանը հաստատվել է դրա իրականացման կարգը:

«Հիմքն օրենքն է եւ հաստատված կարգը. առգրավել եւ ոչնչացնել»,-ասաց Հարությունյանը:

ՆԳՆ–ՈՒՄ ՆԵՐԴՐՎԵԼ Է ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունում ներդրված Զանգերի կենտրոնը կնպաստի քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավմանը: «ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության գործառույթների շրջանակում մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, տեղեկությունները քաղաքացիներին եւ օտարերկրացիներին առավել հասանելի դարձնելու համատեքստում ներդրվել է Զանգերի կենտրոն՝ 84-22 կարճ հեռախոսահամարով:

ՀՀ քաղաքացիության, փաստաթղթավորման գործընթացների, օտարերկրացիներին ուղղված ծառայությունների վերաբերյալ հարցերով կարող եք զանգահարել նշված հեռախոսահամարով՝ երկուշաբթիից ուրբաթ ժամը 9.00-ից 18.00-ն»,- հայտնում են ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունից:

ԱՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ԱԳՐԵՍԻՎ ԱՐՇԱՎ Է ՍԿՍՎԵԼ

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը կարծում է, որ աղի մասին օրինագծի դեմ Հայաստանում ագրեսիվ ու լայնամասշտաբ արշավ սկսվեց:

Նա, սակայն, պնդում է, որ այս հարցով պետք է լուրջ քայլեր ձեռնարկվեն:

«Հայաստանում մենք օգտագործում ենք կրկնակի չափի աղ, լուրջ քայլեր պետք է ձեռնարկել»,- լրագրողների հետ հանդիպմանն ասաց նախարարը:

Ավանեսյանը նշեց, որ աշխատում են հանրային սննդի օբյեկտների հետ, որ վերանայեն սննդի մեջ աղի չափաքանակները: Նրա խոսքով՝ հանրային սննդի օբյեկտները կառուցողական են մոտենում այս հարցին:

Այս պահին նախագիծը դեռ քննարկման փուլում է:

Հիշեցնենք՝ ՀՀ առողջապահության նախարարությունն առաջարկում է «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքում եւ «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքում լրացումներ կատարել:

Ըստ նախագծի՝ հանրային սննդի օբյեկտներում սեղանների վրա կարգելվի աղաման դնելն առանց սպառողի պահանջի, հակառակ դեպքում՝ տնտեսավարողը կտուգանվի:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝կերակրի աղի քանակը չպետք է գերազանցի օրական 5 գրամը, մինչդեռ, Հայաստանում դրա օգտագործման ծավալը կրկնակի գերազանցում է ԱՀԿ-ի կողմից սահմանված շեմը:

Հետազոտությունները վկայում են, որ աղի չարաշահումը նպաստում է սրտանոթային համակարգի հիվանդությունների եւ ինսուլտների առաջացման ռիսկի բարձրացմանը:

Նախարարությունում նաեւ քննարկում են ռեյտինգավորման մեխանիզմ սկսել հանրային սննդի օբյեկտների համար, հետո, եթե պետք լինի՝ վարչարարական գործիքներ կկիրառեն:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 9 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«ԹԻՄ»

ՁԵՌՔ Է ԲԵՐՎԵԼ Imagine ՕՊԵՐԱՏՈՐԻ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՓԱԹԵԹԸ

Team ընկերությունների խումբը հայտարարում է Իռլանդիայի հեռահաղորդակցության օպերատորներից մեկի՝ Imagine Broadband ընկերության բաժնետոմսերի վերահսկող փաթեթի ձեռքբերման մասին: Գործարքը կնքվել է խոշորագույն միջազգային ներդրումային Brookfield Corporation-ի հետ, որը շարունակում է ընկերությունում գործել որպես փոքրամասնական բաժնետեր:

Imagine-ը ֆիքսված ձայնային կապի եւ անլար լայնաշերտ ինտերնետի ծառայություններ է մատուցում Իռլանդիայի ողջ տարածքում:

«Սա մեր առաջին խոշոր գործարքն է Եվրոպայի տարածքում եւ նշանակալի ձեռքբերում է հետագա զարգացման համար: Որպես հայկական ընկերություն՝ մենք հպարտ ենք, որ ընդլայնում ենք բիզնեսի շրջանակները եւ բացում նոր հեռանկարներ, որոնք նաեւ կնպաստեն երկրի տնտեսության զարգացմանը՝ Հայաստանն առավել ճանաչելի դարձնելով միջազգային բիզնես միջավայրում»,- ասում է Team ընկերությունների խմբի համահիմնադիր Ալեքսանդր Եսայանը:

Գործունեության մեկնարկից ի վեր Imagine-ը կիրառում է բոլոր ժամանակակից տեխնոլոգիաները նույնիսկ Իռլանդիայի ամենահեռավոր բնակավայրեր արագ եւ հուսալի ինտերնետի հասանելիություն ապահովելու համար: Այժմ ընկերությունը խոշոր ներդրումներ է կատարում օպտիկամանրաթելային ցանցերում:

Imagine-ի նոր ղեկավար է նշանակվել հեռահաղորդակցության եւ բիզնեսի ոլորտում ավելի քան քսան տարվա փորձ ունեցող Նայլ Թալլոնը: Նրա խոսքով՝ Team ընկերությունների խմբի այս ներդրումը Imagine-ի պատմության մեջ հետաքրքիր նոր էջ է բացում:

«Մենք արդեն սկսել ենք աշխատել մեր թիմի եւ շուկայի գործընկերների հետ՝ ընդլայնելու մեր հասանելիությունն ու առաջարկները եւ երկրով մեկ տրամադրելու ավելի արագ ինտերնետ եւ նորարարական լուծումներ»,-ասում է նա:

Սա Team ընկերությունների խմբի արդեն երկրորդ միջազգային գործարքն է, որը բխում է Խմբի ռազմավարական նպատակներից՝ զարգացնել հայկական բիզնեսը եւ ամրապնդել Հայաստանի դերը հեռահաղորդակցության ոլորտում:

2023 թվականին Team ընկերությունների խումբը ձեռք էր բերել նաեւ վրացական SkyTel ընկերության բաժնետոմսեր Հայաստան մտնող ինտերնետ ուղիները դիվերսիֆիկացնելու եւ ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը բարձրացնելու համար: Այսկերպ Team ընկերությունների խումբը նախադրյալներ է ստեղծել Team Telecom Armenia-ի՝ որպես տարածաշրջանային օպերատոր, իր դիրքն էականորեն ամրապնդելու համար:

Թիմ ընկերությունների խմբին են պատկանում նորարարական, ինժեներական ու տեխնոլոգիական լուծումներ առաջարկող Team Telecom Armenia, Team Systems, Team Solutions, TeamPay ընկերությունները, ինչպես նաեւ Buy.am առցանց մոլը:

Team Telecom Armenia

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Հանձն առնելով շրջակա միջավայրի վրա գործունեության ազդեցությունը նվազեցնելու պարտավորություն՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ (առրանիշը՝ Team Telecom Armenia) թողարկել է Կայուն զարգացման պարտատոմսեր. ընկերությունը հատուկ միջոցառման ժամանակ ապագա ներդրողներին ներկայացրեց բիզնեսի շարունակական ընդլայնմանն ուղղված իր ծրագրերը եւ պարտատոմսերի թողարկման մանրամասները:



Ընկերությունը թողարկել է դոլարային եւ դրամային պարտատոմսեր ընդհանուր 75 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով: Ներգրավված միջոցներն ուղղվելու են ընկերության ռազմավարական առանցքային ուղղությունների զարգացմանը, մասնավորապես բջջային ու ֆիքսված ցանցերի, Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ենթակառուցվածքի ընդլայնմանը, ինչպես նաեւ վարկերի ամբողջական վերաֆինանսավորմանը:

Ողջունելով հյուրերին՝ Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը նշեց, որ սա վճռորոշ է Հայաստանի հեռահաղորդակցության ենթակառուցվածքների արդիականացման ու դեպի կայուն թվային ապագա անցնելու համար:

«Այս պարտատոմսերի թողարկումը եւս մեկ համարձակ քայլ է, որն իրականացնում ենք ֆինանսական եւ հեռահաղորդակցության ոլորտներում: Սա ինչպես ներդրում անելու եւ խնայողություններն արդյունավետ օգտագործելու, այնպես էլ երկրի տելեկոմ ոլորտի զարգացմանը մասնակից դառնալու հնարավորություն է»,-հավելեց նա:

Առաջին սերիայի դոլարային պարտատոմսերի անվանական ծավալը 45 միլիոն ԱՄՆ դոլար է, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, արժեկտրոնային տոկոսադրույքը՝ 7.95%, շրջանառության ժամկետը՝ 60 ամիս: Երկրորդ սերիայի դոլարային պարտատոմսերի անվանական ծավալը 20 միլիոն ԱՄՆ դոլար է, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ կրկին 100 ԱՄՆ դոլար, արժեկտրոնային տոկոսադրույքը՝ 7.85%, շրջանառության ժամկետը՝ 48 ամիս:

Դրամային պարտատոմսերի անվանական ծավալը 3.9 միլիարդ դրամ է, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 հազար դրամ, արժեկտրոնային տոկոսադրույքը՝ 11.5%, շրջանառության ժամկետը՝ 60 ամիս: Բոլոր սերիաների պարտատոմսերի տեղաբաշխումը կիրականացվի մինչեւ 2024թ. դեկտեմբերի 18-ը:

Կայուն պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնում է Ամերիաբանկը:

«Team Telecom Armenia-ի՝ Կայուն զարգացման հետ կապված պարտատոմսերի թողարկումն իր տեսակի մեջ առաջինն է Հայաստանում: Այն էական նշանակություն ունի բնապահպանական, սոցիալական եւ կորպորատիվ կառավարման հետ կապված խնդիրներն ընդգծելու եւ դրանց լուծմանն ուղղված միջացառումներ

իրականացնելու տեսանկյունից: Այն կարեւոր է նաեւ ներդրողների համար, քանի որ ընձեռում է այս կարեւոր առաքելության իրագործմանը մասնակցություն ունենալու բացառիկ հնարավորություն»,- ասաց Ամերիաբանկի Տնօրինության նախագահ, Գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը:

Պարտատոմսեր ձեռք բերել հնարավոր է MyAmeria հավելվածի MyInvest հարթակի միջոցով, կամ այցելելով Ամերիաբանկի որեւէ մասնաճյուղ եւ լրացնելով հայտ-հանձնարարականը, կամ ուղարկելով լրացված հայտ-հանձնարարականի ձեւը Ամերիաբանկի էլ. հասցեին՝ capitalmarkets@ameriabank.am:

Վերջին երկու տարվա ընթացքում միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական կառավարման համակարգ ներդնելու արդյունքում ընկերությունը էականորեն նվազեցրել է իր գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ պարտավորվելով մինչեւ 2029 թվականը կրճատել արտանետումները 40%-ով:

Միջոցառմանը ներկա էին Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գաստյանը, Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը, Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, միջազգային կառույցների, ֆինանսաբանկային ոլորտի ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Team Telecom Armenia-ի գործընկերները, բաժնետերերն ու թիմակիցները:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ: Պարտատոմսերի տեղաբաշխողն է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ ընկերությունը: Պարտատոմսերի ձեռքբերման կարգին, ազդագրի էլեկտրոնային տարբերակին եւ պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարությանը կարելի է ծանոթանալ այստեղ: Թողարկողի եւ առաջարկվող պարտատոմսերի բոլոր մանրամասները, ինչպես նաեւ դրանց առնչվող ռիսկերը ներկայացված են ծրագրային ազդագրում:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿԸ 50 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ ԿՈՒՂՂԻ ՄՓՄՁ-ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

«Ակբա» բանկի եւ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) նոր համագործակցության արդյունքում Ակբան 50 միլիոն դոլար կուղղի Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը, զարգացմանը:

Նոր համագործակցությամբ IFC-ն կկիսի Ակբա բանկի կողմից տրամադրվող 50 միլիոն դոլարի չափով վարկերի՝ մինչեւ 50%-ի վերադարձելիության ռիսկը: Համագործակցությունն Ակբա բանկին թույլ կտա էլ ավելի ընդլայնել Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին տրամադրվող ֆինանսավորումը:

«IFC-ի հետ այս նոր համագործակցությունը կարեւոր նախագիծ է. այն ուղված է միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների աջակցմանը: Ծրագիրը ռիսկերը կիսելու մասին է. IFC-ն աջակցում է, որ ավելի համարձակ լինենք, ակտիվորեն ու համարձակորեն ֆինանսավորենք միկրո, փոքր եւ միջին ձեռնարկություններին: Կարծում եմ, որ մենք շատ արագ կարող ենք տեղաբաշխել այս միջոցները»,- նշել է Ակբա բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

«Ակբա բանկի հետ ռիսկի կիսման այս համագործակցությունը կարեւոր է Հայաստանի համար, քանի որ այն աջակցում է երկրի կայուն եւ ներառական զարգացմանը: Այս նախագծով մենք նպաստելու ենք Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը, մասնավորապես՝ լուծելով ֆինանսական ռեսուրսների ներգրավման հարցում նրանց առջեւ ծառացած մարտահրավերները: Շատ կարեւոր է, որ այս համագործակցությունից օգտվեն նաեւ կանանց պատկանող ձեռնարկությունները, քանի որ ֆինանսավորման արգելքները հատկապես ակնառու են կանանց պատկանող ՓՄՁ հատվածում, գյուղական տարածքներում եւ ագրոբիզնեսում»,- նշել է IFC-ի՝ Եվրոպայում ֆինանսական հաստատությունների խմբի տարածաշրջանային ավագ մենեջեր Մարսելո Կաստեյանոսը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՐԵՔ ՓՈՒԼ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՆՐԱՄԱՍԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը հանդիպել է հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների 2024-2025 ուսումնական տարվա հանրապետական առարկայական օլիմպիադաների հանրապետական հանձնաժողովների անդամների հետ: Այս մասին տեղեկացնում են ԿԳՄՄՆ-ից:

«Քննարկվել են առարկայական օլիմպիադաների կազմակերպմանը վերաբերող հարցեր, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել դպրոցական առարկայական օլիմպիադաների անցկացման կարգում եւ ընթացակարգում կատարված վերջին փոփոխություններին:

«Վերլուծելով վերջին տարիներին օլիմպիադաների կազմակերպումը՝ նկատել ենք մի շարք խնդիրներ, որոնք լուծելու համար ամբողջությամբ վերանայվել է օլիմպիադաների կազմակերպման կարգը, լրամշակվել է իրավական ակտը»,- ասել է նախարարի տեղակալն ու գործընթացի արդյունավետ կազմակերպման համար կարեւորել հանձնաժողովների անդամների առաջարկներն ու կարծիքների փոխանակումը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ հիմնական փոփոխություններից մեկն այն է, որ այս ուսումնական տարվանից առարկայական օլիմպիադաները կանցկացվեն 3 փուլով՝ դպրոցական, մարզային, հանրապետական, որոնցից յուրաքանչյուրի կազմակերպման եւ անցկացման համար սահմանվել են հստակ կարգավորումներ: Նախկինում կար նաեւ տարածքային փուլը, որը վաղուց արդեն կորցրել էր իր նշանակությունն ու արդիականությունը, ուստի որոշվել է գործընթացը կազմակերպելիս հրաժարվել այդ փուլից:

Արաքսիա Սվաջյանի տեղեկացմամբ՝ ձեւավորվել է նաեւ Հանրապետական օլիմպիական խորհուրդ, որին վերապահված են օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների անցկացման, բողոքարկման ընթացակարգերի մշակումը, վերահսկողության իրականացման, թափանցիկության ապահովման մեխանիզմները: Կարեւոր մյուս փոփոխությամբ՝ օլիմպիադայի բոլոր փուլերի համար մրցութային առաջադրանքները կազմելու են հանրապետական առարկայական հանձնաժողովները, որոնք նաեւ դպրոցական եւ մարզային փուլերի հաղթողների համար սահմանելու են անցողիկ շեմը՝ ըստ յուրաքանչյուր առարկայի:

Հանրակրթական նոր չափորոշչի ներդրմամբ պայմանավորված՝ առարկայական օլիմպիադաների ցանկում ավելացել է «Մայրենի» առարկան՝ ընթերցանության ստուգատեսի ձեւաչափով, որն այս ուսումնական տարում անցկացվելու է միջին դասարանների (5-6-րդ) սովորողների համար:

«Հիմնական դպրոցի բազային առարկաների՝ «Մայրենիի» եւ «Մաթեմատիկայի» համար նախատեսում ենք օլիմպիադաներ: Ընթերցանության օլիմպիադան, կարծում եմ, առաջին հերթին պետք է ստուգի տեքստն ընկալելու եւ այն արդյունավետ կիրառելու կարողություններն ու հմտությունները: Հաջորդ տարիներին «Մայրենի» առարկայից օլիմպիադա նախատեսում ենք ունենալ նաեւ 7-րդ եւ 8-րդ դասարանների սովորողների համար: «Մաթեմատիկա» առարկայի դեպքում, ըստ իս, հիմնական դպրոցում ավելի շատ պետք է շեշտը դնել տրամաբանությունը ստուգող առաջադրանքների վրա, բայց սա եւս մասնագիտական խմբերի հետ քննարկման կարիք ունի»,- ասել է Արաքսիա Սվաջյանը՝ կարեւորելով առարկայական հանձնաժողովներում բարձրակարգ մասնագետների, այդ թվում՝ երիտասարդների ընդգրկումը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են առարկայական հանձնաժողովների ձեւավորման, դրանցում համապատասխան մասնագետների ընդգրկման ընդհանուր սկզբունքներին առնչվող հարցեր:

Ծավալված շահագրգիռ քննարկման ընթացքում նախարարի տեղակալը պատասխանել է առարկայական հանձնաժողովների անդամների հարցերին, որոնք վերաբերել են օլիմպիադայի կազմակերպման մանրամասներին»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

«ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ. ԺԱԿ ԴԸ ՄՈՐԳԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ»

Հայաստանի պատմության թանգարանում բացվել է «Երեկ եւ այսՕr. Ժակ դը Մորգանի հետքերով» խորագրով միջազգային ցուցադրությունը, որը կգործի մինչեւ 2025 թվականի մարտի 11-ը:

Ցուցահանդեսի շրջանակում Հայաստանում առաջին անգամ ներկայացվել են 19-րդ դարի 80-ական թվականներին հայտնի հնագետ Ժակ դը Մորգանի կողմից Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ Ախթալայում, պեղված հնագիտական ժառանգության ուշագրավ նմուշները, որոնք պահվում են Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանում:

Ֆրանսիայից բերված 5 ցուցանմուշները համադրվել են 90-ական թվականներին Ժակ դը Մորգանի հետքերով հայ-ֆրանսիական հնագիտական արշավախմբերի գործունեության ընթացքում հայտնաբերված եւ ՀՀ տարբեր թանգարաններում պահվող ավելի քան վեց տասնյակ նմուշների հետ, որոնց մի մասն առաջին անգամ է ցուցադրվում:

Բացմանը ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դը Կոտինյին, Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանի տնօրեն Ռոզ-Մարի Մուսսոն, արվեստասեր հանրության ներկայացուցիչներ:

Ցուցահանդեսը կազմակերպվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի եւ Ֆրանսիայի մշակույթի նախարարությունների աջակցությամբ՝ Հայաստանի պատմության թանգարանի եւ Ֆրանսիայի ազգային հնագիտության թանգարանի /Սեն Ժերմեն ան Լեյի ամրոց/ համագործակցությամբ, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան նախաձեռնությամբ:

Շնորհավորելով բացառիկ ցուցադրության բացման կապակցությամբ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը կարեւորել է թանգարանների միջազգային կապերի ընդլայնումը:

«Հայաստանի պատմության թանգարանում միջազգային ցուցահանդեսների կազմակերպման լավ ավանդույթ է ձեւավորվել: Վերջին տարիներին թանգարանը նկատելիորեն ակտիվացրել է համագործակցությունը միջազգային գործընկերների հետ, ինչը կարեւոր ուղղություն է թանգարանային ոլորտի պետական քաղաքականության տեսանկյունից: Հատկապես Ֆրանսիայի հետ համագործակցության օրակարգը շատ լայն է, եւ առաջիկայում եւս նոր ու հետաքրքիր նախաձեռնություններ ենք սպասում»,- ասել է նա:

Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը նշել է, որ ֆրանսիական կողմի հետ համագործակցությունը շարունակական է լինելու. ՀՊԹ-ն համագործակցության հուշագիր է կնքել նաեւ Լուվրի թանգարանի հետ, եւ հաջորդ տարի նախատեսված են համատեղ ցուցադրություններ:

ՀՀ ԿԳՄՄՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՒԵՖԱ-Ն ՏՈՒԳԱՆԵԼ Է ՀՖՖ-ԻՆ

Ֆուտբոլի եվրոպական ասոցացիան՝ ՈՒԵՖԱ-ն, 37 500 եվրոյով տուգանել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային:

ՈՒԵՖԱ-ն Ֆարերյան կղզիների դեմ խաղում ճայթուկների օգտագործման համար տուգանել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային 20 000 եվրոյով եւ կարգադրել ազգային թիմի առաջիկա խաղում, որտեղ ՀՖՖ-ն կլինի հյուրընկալող կողմ, փակել մարզադաշտի ընդհանուր առմամբ 500 նստատեղ՝ հարավային եւ հարավ-արեւելյան տրիբունաներում:

Որոշումը կգործի 2 տարվա փորձաշրջանով՝ բոլոր տնային հանդիպումների համար:

ՀՖՖ-ն տուգանվել է նաեւ 17.500 եվրոյով՝ հանդիպման ընթացքում բարձրացված պաստառների համար:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ Global Fight League–Ի ՀԵՏ

Խառը մենամարտերի միջին քաշային կարգում Bellator-ի նախկին չեմպիոն, Նիդերլանդները ներկայացնող հայ մարտիկ Գեղարդ Մուսասին պայմանագիր է կնքել Global Fight League փրոմոուշենի հետ, հայտնում է կազմակերպության մամուլի ծառայությունը:

Գարնանը Մուսասին Պրոֆեսիոնալ մարտիկների լիգային (PFL) մեղադրել էր պայմանագրի պայմանները չկատարելու մեջ, իսկ ավելի ուշ PFL-ը խզել էր նրա հետ պայմանագիրը:

MMA-ում իր նախորդ մենամարտում Մուսասին մրցավարների որոշմամբ պարտվել էր Ֆաբիան Էդվարդսին: Գեղարդը կարիերայի ընթացքում 49 հաղթանակ է տարել եւ 9 պարտություն կրել, հանդես է եկել նաեւ UFC-ում:

ՈՒԵՖԱ-Ն ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՆՈՐ ԳՆԴԱԿԸ

Չեմպիոնների լիգայի հանդիպումների գնդակների պաշտոնական մատակարար Adidas-ը ներկայացրել է նոր Fired Up գնդակը, որը շրջանառության մեջ է մտնելու լիգայի փուլի 7-րդ եւ 8-րդ տուրերից սկսած, հայտնում է ՈՒԵՖԱ-ի մամուլի ծառայությունը:

Fired Up գնդակը մի փոքր փոփոխված դիզայնով է, բայց պահպանում է լիգայի փուլի համար նախատեսված գնդակի դասական դիզայնը՝ կարմիր, սպիտակ, դեղին ալիքներով եւ սպիտակ աստղերով:

Նոր գնդակը ունի adidas performance ինովացիոն համակարգ, որն ավելի ճշգրիտ է դարձնում գնդակի պտտեցումը:

● *Դեկտեմբերի 15-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞րն է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

Մոնիկա Ղումաշյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին: Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է Մաքսային միության առրանքը:

Լեռնիկ Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներն են, որոնք ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում, ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք եւ ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝ նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում նշված ենթակետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված ապրանքներից եւ (կամ) օտարերկրյա ապրանքներից եւ, նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մաքսային միության մաքսային օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի դեպքում Մաքսային միության մաքսային տարածք ավելի վաղ ներմուծված ապրանքները կամ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները, որոնք ձեւակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, այդ տարածքից արտահանվում են առանց ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարման եւ (կամ) ներմուծման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձման (հաշվանցման) եւ առանց ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

ՀՀ տարածքում փակ է Արագածոտնի մարզում «Ամբերդ» բարձր լեռնային օդերեւութաբանական կայանից Քարի լիճ տանող ավտոճանապարհը: «Վարդենյաց լեռնանցքը կցորդիչով բեռնատարների համար դժվարանցանելի է՝ միայն անվաշղթաների կիրառման դեպքում:

Սյունիքի մարզի բարձրադիր գոտիների, Գեղարքունիքի, Լոռու մարզերի, Ապարանի, Արագածի (բուք է) տարածաշրջանների եւ Արթիկ քաղաքի ավտոճանապարհներին տեղ-տեղ առկա է մերկասառույց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9	-1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8	-1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5	+3 + 5
Գեղարքունիք	-7 - 11	- 2 + 1
Լոռի	- 4 - 8	+1 + 4
Տավուշ	0 - 4	+3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9	0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4	+ 4 + 7

Արարատ	0 - 4	+6 + 8
Արմավիր	-1 - 5	+ 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10	0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2	+12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3	+ 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8	- 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7	0 + 6
Երեւան	0 - 2	+ 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*